Կազմված է 15.06.2022թ.-ին և բաղկացած է 12 թերթից

Տպագրված է ընդամենը 6 օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
փակ բաժնետիրական ընկերության
2022թ. հունիսի 15-ին կայացած
հիմնադիրների ընդհանուր
ժողովի որոշում
Արձանագրություն թիվ 1
Տնօրեն՝Վաչիկ Գևորգյան

15 հունիսի 2022թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ

_____

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

_____
(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Երևան
2022

ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը և ընդունվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Ընկերություն) առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող և սույն կանոնադրության 12-րդ կետով սահմանված թվով բաժնետոմսերի:
2. **Ընկերության լրիվ ֆիրմային անվանումն է՝**
   «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերություն
   Закрытое Акционерное Общество "АПРИКОТ КАПИТАЛ"
   Closed Joint Stock Company "APRICOT CAPITAL"
   Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է՝
   «ԷԿ» ՓԲԸ
   ЗАО "АК"
   CJSC "AC"
3. Ընկերության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Վ.Սարգսյան 26/1, «Էրեբունի պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ, 812 գրասենյակ:
4. Ընկերության ստեղծման նպատակն է ներդրումային ծառայությունների մատուցման և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով թույլատրված այլ գործունեության իրականացման (ոչ հիմնական ծառայություններ) միջոցով շահույթի ստացումը:
5. Ընկերության հիմնական գործունեությունն է արժեթղթերի փաթեթի կառավարումը: «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից:
6. Ընկերությունն իր գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով:
7. Ընկերությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով (այսուհետ՝ «Օրենսգիրք»), «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ «Օրենք»), «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ օրենսդրական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:
8. Ընկերությունն իրավաբանական անձ է, ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է ունենալ իր անվանմամբ կլոր կնիք՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, դրոշմեր, ձևաթղթեր և կնիքներ՝ այդ թվում համարակալված: Ընկերությունը կարող է ունենալ օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային և սպասարկման նշաններ: Ընկերությունն իր անունից կնքում է պայմանագրեր, ձեռք է բերում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում է պարտավորություններ, կարող է հանդես գալ դատարանում որպես հայցվոր կամ պատասխանող: Ընկերությունն իր գործունեությանը համապատասխան իրականացնում է իր գույքի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը: Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

   Ընկերությունը համարվում է ստեղծված և կարող է գործել որպես իրավաբանական անձ ընկերության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Ընկերության իրավունակությունը դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին ներդրումային ընկերությունների գրանցումների մատյանում գրառման) պահից: Ընկերությունը գործում է առանց գործունեության ժամկետի սահմանափակման: Ընկերությունն իրավունք ունի ստեղծել մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, հիմնարկներ, հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ ընկերություններ կամ մասնակցել նրանցում, ինչպես նաև

մասնակցություն ունենալ այլ կազմակերպություններում:

9. Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դրամական և արժեթղթերի հաշիվներ բացել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում կամ դեպոզիտարիաներում:

10. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար: Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը: Ընկերության բաժնետերերի միջև հարաբերությունները կարգավորվում են բաժնետերերի միջև կնքված համաձայնագրով:

11. Եթե Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ է հանդիսանում բաժնետիրոջ կամ այլ անձանց գործունեությունը (անգործությունը), որոնք ունեն Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ Ընկերության գործունեությունն այլ կերպ կանխորոշելու հնարավորություններ, ապա Ընկերությանը պատկանող գույքը չբավարարելու դեպքում այդ բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն՝ Ընկերության պարտավորությունների համար: Վերոհիշյալ բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են իրենց այդ իրավունքը կամ հնարավորությունները Ընկերությանը որոշակի գործողություններ կատարել կամ չկատարել պարտադրելու նպատակով, նախօրոք իմանալով, որ այդ պատճառով Ընկերությունը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում:

II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ԴՐԱ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Ընկերության կանոնադրական կապիտալը 320 000 000 (երեք հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամ է: Այն բաղկացած է 32 000 (երեսուներկու հազար) հատ տեղաբաշխված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսից, որի անվանական արժեքը կազմում է 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված են: Սույն կանոնադրությամբ սահմանված բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են բոլոր բաժնետերերին և լրիվ վճարված են վերջինիս կողմից: Ընկերության հայտարարված հասարակ (սովորական) բաժնետոմսերի առավելագույն ծավալը կազմում է 500 000 000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ՝ 50 000 (հիսուն հազար) հատ 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսեր:

13. Ընկերությունը կարող է փոփոխել (ավելացնել կամ նվազեցնել) իր կանոնադրական կապիտալի մեծությունը, որի մասին որոշումն ընդունվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

14. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է մեծացվել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ: Ընդ որում, Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն կանոնադրության 10-րդ կետում սահմանված հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում: Հայտարարված բաժնետոմսերի տեղաբաշխման կարգը և պայմանները սահմանվում են այդ բաժնետոմսերի թողարկման մասին որոշմամբ: Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում:

15. Ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնին համապատասխան նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Այդ իրավունքի իրականացման ժամկետը՝ բաժնետոմսերի տեղաբաշխումն սկսելու օրվանից հաշված, չի կարող 30 օրից պակաս լինել:

16. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է կատարվել՝
    1) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ.

2) բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցմամբ, այդ թվում՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում, դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

17. Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել բաժնետոմսեր, պարտատոմսեր, մուրհակներ, ածանցյալ արժեթղթեր և օրենքով նախատեսված այլ արժեթղթեր: Ընկերության թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերը (այդ թվում՝ արտոնյալ) ու պարտատոմսերը անվանական են և ոչ փաստաթղթային ձևի, եթե թողարկման մասին որոշմամբ այլ ձև չի նախատեսվում: Ընկերության կողմից թողարկված միևնույն տեսակի բաժնետոմսերի անվանական արժեքները պետք է լինեն միևնույնը: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը ոչ փաստաթղթային ձևի են:

18. Ընկերությունը՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, իրավունք ունի տեղաբաշխել մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր, այդ թվում՝ հաստատագրված և (կամ) փոփոխական շահութաբաժնով (անկախ Ընկերության տնտեսական գործունեության արդյունքից), փոխարկելի, մարվող և այլ տեսակի արտոնյալ բաժնետոմսեր: Ընկերության կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի գումարային անվանական արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալի ընդհանուր ծավալի 25 տոկոսը:

19. Արտոնյալ բաժնետոմսերն իրավունք են տալիս իրենց սեփականատերերին ձայնի իրավունքով մասնակցել Ընկերության բաժնետտերի ընդհանուր ժողովներին, եթե քննարկվում են Ընկերության լուծարման կամ վերակազմակերպման հարցեր, ինչպես նաև սույն կանոնադրության 20-րդ կետով սահմանված դեպքում:

20. Որոշակի տեսակի (դասի) արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում ձեռք են բերում ձայնի իրավունք, եթե քննարկվում են կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այն որոշումները, որոնք սահմանափակում են այդ դասերի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները, ներառյալ՝ այլ դասերի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների եւ (կամ) լուծարային արժեքի սահմանումը կամ ավելացումը, ինչպես նաեւ այլ դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին շահութաբաժինների եւ (կամ) լուծարային արժեքի վճարման հերթականության արտոնությունների տրամադրումը:

21. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից որոշված կարգով կարող է աշխատակիցներին տրամադրվել ինչպես սովորական, այնպես էլ արտոնյալ (դրանց առկայության դեպքում) բաժնետոմսեր: Աշխատակցի բաժնետոմսերի սեփականատերերը, օգտվում են նույն իրավունքներից, ինչպիսիք սահմանված են օրենքով և Ընկերության կանոնադրությամբ դրանց համապատասխանող հասարակ կամ տարբեր տեսակների արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի համար: Աշխատակցի բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է տարբերվի Ընկերության սովորական և համապատասխան տեսակի արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքից:

22. Ընկերության բաժնետոմսերի (այդ թվում՝ արտոնյալ), ինչպես նաև այլ արժեթղթերի դիմաց վճարման միջոց կարող են լինել գույքը, ներառյալ՝ գույքային իրավունքները, արժեթղթերը, մտավոր սեփականությունը, դրամական միջոցները: Ընկերության արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռքբերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով:

23. Ընկերությունն իրավունք ունի թողարկել պարտատոմսեր և օրենքով նախատեսված այլ արժեթղթեր: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները: Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք: Պարտատոմսերը չեն կարող թողարկվել մինչև Ընկերության կանոնադրական կապիտալի լրիվ վճարումը: Ընկերությունը կարող է թողարկել միաժամանակյա, ինչպես նաև տարաժամկետ (Ընկերության կողմից սահմանված ժամկետային հաջորդականությամբ) մարման ժամկետով պարտատոմսեր: Պարտատոմսերի մարումն իրականացվում է դրամով կամ այլ գույքով՝ պարտատոմսերի թողարկման մասին որոշման

համաձայն: Ընկերությունը կարող է թողարկել՝

1) Ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր.
2) երրորդ անձանց կողմից պարտատոմսերի թողարկման համար տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր.
3) առանց ապահովման պարտատոմսեր:

24. Ընկերությունը, բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք տալիս են Ընկերության պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռք բերման իրավունք: Ընդ որում, Ընկերությունն իրավունք չունի տեղաբաշխել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, եթե ըստ տեսակների և ձևերի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է նշված տեսակների և ձևերի բաժնետոմսերի քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերը և այլ արժեթղթերն Ընկերության բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար:

25. Ընկերության կողմից տեղաբաշխված անվանական պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացնում է Ընկերությունը, եթե օրենքով և այլ իրավական ակտերով այլ բան չի նախատեսված:

IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26. Ընկերության բաժնետերերն ունեն Ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Եթե որևէ բաժնետեր ցանկանում է վաճառել (վաճառքի առաջարկ անել, վաճառքի կամ գնելու առաջարկ անելուն հրավիրել կամ անհատույց հատկացնել) իրեն սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերը, ապա նա այդ մասին ծանուցում է Ընկերությանը՝ համապատասխան գրություն ուղարկելով Ընկերության տնօրենի անունով: Գրությունը պետք է պարունակի վաճառվող բաժնետոմսերի քանակի, գնի և վաճառքի այլ էական պայմանների մասին տվյալներ: Գրությունը ստանալու պահից երկու օրվա ընթացքում տնօրենը՝ այդ գրությունը կամ դրա ամբողջական տեքստը ներառող ծանուցումը պատվիրված նամակով ուղարկում է կամ համապատասխան ստորագրությամբ առձեռն հանձնում է Ընկերության մյուս բաժնետերերին: Պատվիրված նամակի ուղարկման կամ առձեռն հանձնման ամսաթիվը համարվում է բաժնետոմսերի վաճառքի առաջարկման օր:

27. Եթե բաժնետերերը համաձայնվում են ձեռք բերել առաջարկվող բաժնետոմսերը, ապա դրանք բաշխվում են՝

1) բաժնետոմսերի գնման հայտերով որոշվող համամասնությամբ, եթե այդ հայտերում նշված բաժնետոմսերի գումարային քանակը չի գերազանցում առաջարկվող բաժնետոմսերի գումարային քանակին,
2) բաժնետոմսերի գնման հայտեր ներկայացրած բաժնետերերի միջև՝ նրանց կողմից ձեռք բերված համաձայնության շրջանակներում որոշված համամասնությամբ, կամ
3) բաշխվում են բաժնետերերի միջև համամասնորեն, ըստ՝ կանոնադրական կապիտալում իրենց մասնակցության տեսակարար կշռի:

28. Այն դեպքում, երբ բաժնետոմսերը համամասնորեն բաշխելիս յուրաքանչյուր բաժնետիրոջը բաժին է ընկնում ոչ ամբողջական թվով (կոտորակային) բաժնետոմսեր, Ընկերության ժողովը որոշում է ընդունում բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխման մասին, այնպես, որ յուրաքանչյուր բաժնետիրոջը բաժին ընկնի ամբողջական թվով բաժնետոմսեր:

29. Եթե բաժնետերերը տնօրենի կողմից ծանուցումն ուղղարկելու կամ առձեռն հանձնելու պահից սկսած 30 կամ բաժնետիրոջ կողմից ծանուցումը տնօրենին ուղարկելու պահից սկսած 32 օրվա ընթացքում իրենց նախապատվության իրավունքից օգտվելու մտադրության մասին գրավոր ծանուցում չեն ուղարկում Ընկերությանը, ապա տնօրենի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ Ընկերության խորհուրդը հրավիրում է արտահերթ ժողով, որի օրակարգում ընդգրկվում է Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու կամ հրաժարվելու հարցը: Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում, բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձանց:

30. Բաժնետերն իրավունք ունի վաճառքի առաջարկված բաժնետոմսերը վաճառել Ընկերության այն բաժնետերերին, ովքեր մինչև սույն կանոնադրության 29-րդ կետով սահմանված ժամկետի ավարտը ներկայացրել են բաժնետոմսերի գնման հայտ, եթե միաժամանակ առկա է նաև Ընկերության այլ բաժնետտերերի կողմից իրենց նախապատվության իրավունքի հրաժարման մասին գրավոր հայտարարություն ուղված Ընկերության տնօրենին կամ վաճառող բաժնետիրոջը: Առաջարկ ներկայացրած բաժնետերը գնման հայտի կամ հայտերի առկայության դեպքում, չի կարող միակողմանիորեն հետ կանչել իր առաջարկը, բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 452-րդ հոդվածով սահմանված դեպքերի:

31. Եթե սույն կանոնադրության 29-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից հետո ոչ մի բաժնետեր չի ներկայացրել գնման հայտ կամ Ընկերությունը որոշում է կայացրել չգնել առաջարկվող բաժնետոմսերը, ապա բաժնետերն իրավունք ունի վաճառքի առաջարկած բաժնետոմսերը վաճառել երրորդ անձի: Բաժնետերը չի կարող բաժնետոմսերը վաճառել երրորդ անձանց ավելի ցածր գնով և այլ նպաստավոր պայմաններով, քան առաջարկվել է մյուս բաժնետերերին և Ընկերությանը:

32. Սույն կանոնադրության 26-31-րդ կետի դրույթները չեն տարածվում բաժնետոմսերի փոխանցման այն դեպքերի վրա, որոնք կատարվում են ժառանգության հիմքերով բաժնետոմսերն այլ անձանց անցնելու կանոններով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ բաժնով սահմանված ժառանգական իրավունքի կանոններով: Մեկից ավելի ժառանգների առկայության դեպքում, ժառանգության զանգվածի մեջ մտնող բաժնետոմսերը բաշխվում են նրանց միջև հավասարաչափ և համամասնորեն, եթե ժառանգների համաձայնությամբ բաշխման այլ համամասնություն որոշված չէ:

33. Բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի՝
    1) մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.
    2) մասնակցել Ընկերության կառավարմանը.
    3) ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.
    4) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը.
    5) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (գաղտնի փաստաթղթերից բացի), այդ թվում, Ընկերությանը դիմելուց հետո 5-օրյա ժամկետում ստանալ տեղեկություններ, որոնք վերաբերում են հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին և Ընկերության գործունեությանը.
    6) ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.
    7) հանդես գալ առաջարկություններով ժողովում.
    8) ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
    9) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.
    10) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը.
    11) ունենալ կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

34. Արտոնյալ բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն օգտվում է 33-րդ կետի 1), 3), 4), 7) և 8) ենթակետերով սահմանված իրավունքներից՝ սույն կանոնադրության դրույթներին համապատասխան, իսկ 2), 5), 6), 9), 10) և 11) ենթակետերով սահմանված իրավունքներից՝ սովորական բաժնետոմսերի սեփականատերերի հետ հավասար իրավունքներով:

35. Բաժնետերերը պարտավոր են չհրապարակել ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները:

V. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

36. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է նշված չափից ավելի փոքր մեծություն, հատկացումները այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներց: Պահուստային հիմնադրամը օգտագործվում է

Ընկերության կորուստները (վնասները) ծածկելու, պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

37. Ընկերությունը՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, կարող է ստեղծել նաև այլ հիմնադրամներ, որոնք կօգտագործվեն, սոցիալական, մշակույթային, բարեգործական, աշխատանքի խրախուսման, աշխատակիցների բաժնետիրացման, հաստատագրված շահութաբաժինների վճարման կամ այլ նպատակների համար:

VI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԸ

38. Ընկերությունը պարտավոր է վճարել շահութաբաժիններ, եթե որոշում է ընդունել (հայտարարել է) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարելու մասին: Շահութաբաժինները վճարվում են Հայաստանի Հանրապետության դրամով, այլ գույքով, այդ թվում՝ Ընկերության բաժնետոմսերով, իսկ իրավական ակտերով թույլատրվող դեպքերում՝ նաև արտարժույթով: Շահութաբաժինները վճարվում են Ընկերության շահույթից կամ հաստատագրված շահութաբաժինների վճարման հիմնադրամից:

39. Բաժնետոմսերի տարեկան շահութաբաժինների վճարման և շահութաբաժնի չափի մասին որոշումը ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ Ընկերության խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման և շահութաբաժնի չափի մասին որոշումը ընդունվում է Ընկերության խորհրդի կողմից:

40. Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից: Տարեկան շահութաբաժինները վճարվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո 6 (վեց) ամսվա ընթացքում:

VII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ

41. Ընկերությունը պարտավոր է ապահովել ռեեստրի՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված կարգով վարումը և պահպանումն Ընկերության պետական գրանցման պահից մեկ ամսվա ընթացքում: Եթե Ընկերությունը օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրավունք ունի վարելու անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր, ապա այն վարվում և պահպանվում է Ընկերությունում, հակառակ դեպքում այն հանձնվում է մասնագիտացված կազմակերպությանը:

42. Բաժնետերերը, ինչպես նաև Ընկերության այլ արժեթղթերի սեփականատերերը պարտավոր են Ընկերության ռեեստրը վարողին ժամանակին տեղեկացնել իրենց վերաբերող տվյալների փոփոխության մասին: Նշված տվյալները ժամանակին չներկայացնելու դեպքում Ընկերությունը պատասխանատվություն չի կրում բաժնետիրոջը, ինչպես նաև Ընկերության այլ արժեթղթերի սեփականատիրոջը պատճառված վնասի համար:

43. Ռեեստրի վարումը, դրանում գրառումների կատարումը և արժեթղթերի սեփականատերերի արժեթղթերի հաշիվների սպասարկումը կատարվում է օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

VIII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

44. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 6 ամսվա ընթացքում: Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

45. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետև՝ ժողովի) իրավասություններն են՝
    1) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
    2) Ընկերության վերակազմակերպումը.

3) Ընկերության լուծարումը.
4) լուծարային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ, ամփոփիչ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը.
5) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.
6) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
7) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.
8) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.
9) բաժնետոմսերի համախմբումը կամ բաժանումը.
10) Ընկերության միանձնյա գործադիր մարմնի ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
11) Ընկերության ներքին աուդիտոր(ներ)ի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
12) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.
13) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
14) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, ինչպես նաև տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.
15) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի անդամների, տնօրենի և ներքին աուդիտոր(ներ)ի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը և նրանց գործունեության արդյունավետության գնահատումը.
16) Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.
17) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը.
18) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ որոշումների ընդունումը:

46. Սույն կանոնադրության 45-րդ կետով սահմանված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության խորհրդին կամ գործադիր մարմնին:

47. Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ ձայնի իրավունք տվող (քվեարկող) բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրության 45-րդ կետի 1), 2), 3), 4), 5), 7), 8), 9), 15), 16), և 17) ենթակետերով նախատեսված հարցերով որոշումների, որոնք ընդունվում են ձայների 100%-ով (միաձայնությամբ): Ժողովի կողմից ընդունված որոշումները, ինչպես նաև քվեարկության արդյունքները որոշում ընդունելու պահից 45 օրվա ընթացքում պետք է ներկայացվեն բաժնետերերին՝ նրանց պատվիրված նամակներ ուղարկելու կամ առձեռն հանձնելու միջոցով:

48. Ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով): Տարեկան ժողովը, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67 հոդվածի 1-ին կետի «ժբ» ենթակետով սահմանված դեպքում հրավիրված ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկությամբ: Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին և որոշումն ընդունվել է սույն կանոնադրության 45-րդ, 466-րդ և 47-րդ կետերի պահանջներին համապատասխան:

49. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը): Ընկերության բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված

ներկայացուցչի միջոցով (լիազորագրի առկայության դեպքում): Խորհրդակցական ձայնի իրավունքով ժողովին կարող են մասնակցել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող Ընկերության խորհրդի, գործադիր մարմնի անդամները, ինչպես նաև Ընկերության ներքին աուդիտոր(ներ)ը և աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում):

50. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Ընկերության խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա: Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև ժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեցող անձինք ծանուցվում են ժողովի գումարման մասին՝ նրանց պատվիրված նամակով համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու կամ ծանուցումն առձեռն հանձնելու միջոցով: Ժողովի գումարման մասին գրավոր ծանուցումը պետք է ուղարկվի կամ առձեռն հանձնվի ժողովի գումարման օրվանից առնվազն 2 (երկու) օր առաջ, եթե օրենքով ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

51. Ժողովում քվեարկությունները կատարվում են քվեաթերթիկների միջոցով, իսկ մինչև 50 բաժնետեր ունենալու դեպում՝ առանց քվեաթերթիկների:

52. Եթե Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի թիվը գերազանցում է 49-ից, ապա Ընկերությունում ստեղծվում է խորհուրդ, որն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը: Ընկերության բաժնետերերի թիվը 50-ից պակաս լինելու դեպքում, Ընկերությունում խորհուրդ չի ստեղծվում, եթե բաժնետերերի ընդհանուր ժողովն այլ բան չի որոշում: Խորհուրդ չստեղծվելու դեպքում՝

1) սույն կանոնադրության 53-րդ կետով սահմանված բացառիկ իրավասության ենթակա հարցերը լուծվում են բաժնետերերի ընդհանուր ժողովով՝ ձայների պարզ մեծամասնությամբ,

2) սույն կանոնադրության 53-րդ կետի 2) և 3) ենթակետերով սահմանված իրավասությունները խորհրդի փոխարեն իրականացնում է Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ընդհանուր քանակում ամենամեծ տեսակարար կշիռ ունցող բաժնետերը, իսկ

3) սույն կանոնադրության 27-րդ և 39-րդ կետի առաջին նախադասությամբ, ինչպես նաև 53-րդ կետի 9) ենթակետով սահմանված իրավասությունները խորհրդի փոխարեն իրականացնում է Ընկերության գործադիր մարմինը:

53. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝
1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
2) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, ժողովների օրակարգի հաստատումը.
3) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը.
4) սույն կանոնադրության 45-րդ կետի 1), 2), 3), 4), 5), 7), 8), 9), 15), 16), և 17) ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովի քննարկմանը.
5) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.
6) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով և դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը, պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.
7) Ընկերության ներքին աուդիտոր(ներ)ի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.
8) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատմանը վերաբերող առաջարկությունների ներկայացումը ժողովին և նրա վճարման չափի սահմանումը.
9) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

10) Ընկերության բաժնետոմսերով վճարվող միջանկյալ շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.
11) Ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների նշանակումը կամ ազատումը, նրանց աշխատավարձի, աշխատանքային պայմանների, ներառյալ՝ նպատակային առաջադրանքների սահմանումը, Ընկերության աշխատակիցներին դրամական պարգևավճարների և խրախուսման համակարգերի սահմանումը, ինչպես նաև Ընկերության հաստիքացուցակի հաստատումը, տնօրենների խորհրդի նախագահի և տեղակալի ընտրությունը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
12) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
13) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին այն փաստաթղթերի հաստատումը, որոնք վերապահված չեն բաժնետերերի ժողովի կամ գործադիր մարմնի իրավասությանը.
14) Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների ու հիմնարկների ստեղծումը, և այլ կազմակերպություններին մասնակցելու վերաբերյալ որոշումների ընդունումը..
15) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում գործարքների կնքումը կամ հաստատումը.
16) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
17) Ընկերության ներքին քաղաքականությունների, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հաստատումը.
18) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:

54. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ժողովի կողմից: Խորհրդի անդամների քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող պակաս լինել 3 (երեք) հոգուց:

55. Խորհրդի նախագահին և նրա տեղակալին ընտրում են խորհրդի անդամները, խորհրդի անդամների կազմից: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին և նրա տեղակալին կամ ընտրել նոր նախագահ և տեղակալ՝ խորհրդի անդամների միաձայնությամբ: Ընկերության խորհրդի նախագահի և գլխավոր տնօրենի պաշտոնները չեն կարող համատեղվել: Խորհրդի նախագահը կամ նրա տեղակալը նախագահում է ժողովներում, բացառությամբ ժողովի վարման կարգով նախատեսված դեպքերի:

56. Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս եռամսյակը մեկ անգամ՝ խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, խորհրդի անդամի, ներքին աուդիտոր(ներ)ի, գործադիր մարմնի, ընկերության աուդիտն իրականացնող անձի, ինչպես նաև քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին տիրապետող բաժնետերերի պահանջով՝ այդ մասին նիստում քննարկման ենթակա հարցերին առնչվող տեղեկատվության կամ զեկույցների հետ միասին, գրավոր ծանուցելով խորհրդի բոլոր անդամներին, խորհրդի նիստի գումարման օրվանից առնվազն 2 (երկու) օր առաջ: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել անդամների ֆիզիկական ներկայությամբ կամ հեռախոսով:

57. Խորհրդի նիստերում նախագահում է խորհրդի նախագահը: Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է խորհրդի նախագահի տեղակալը: Խորհրդի նիստերի քվորումը ապահովվում է, եթե նիստին մասնակցում կամ հեռակա կարգով քվեարկում են խորհրդի բոլոր անդամները: Խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրության 53-րդ կետով նախատեսված հարցերով որոշումների, որոնք ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով այլ բան նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի կամ քվեարկության իրավունքի փոխանցում չի թույլատրվում: Հեռակա կարգով խորհրդի նիստերի գումարումն ու անցկացումը իրականացվում է հեռախոսով կամ ֆաքսիմիլային եղանակով: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է ժողովի հաստատած՝ խորհրդի կանոնակարգով:

58. Եթե խորհրդի որևէ անդամ հրաժարվում է կամ անկարող է դառնում կատարել իր

պարտականությունները, ապա Ընկերությունը պետք է խորհրդի նոր անդամ ընտրելու նպատակով արտահերթ ժողով գումարի, որի մասին որոշումը կայացնում է խորհուրդը:

59. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ տնօրենը: Ընկերության տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ ժողովի և խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի: Ժողովի կողմից Ընկերության տնօրենին նշանակելուց հետո, Ընկերությունը նրա հետ կնքում է պայմանագիր, որը Ընկերության անունից ստորագրում է խորհրդի նախագահը, իսկ խորհուրդ չստեղծվելու պարագայում՝ Ընկերության բաժնետոմսերի ընդհանուր քանակում ամենամեծ տեսակարար կշիռ ունցող բաժնետերը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ամենամեծ տեսակարար կշիռ ունցող մյուս բաժնետերը:

60. Ընկերության տնօրենը՝
    1) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.
    2) առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից.
    3) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
    4) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային.
    5) Տալի vu է լիազորագրեր.
    6) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
    7) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը և այլ ներքին իրավական ակտերը.
    8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
    9) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին, ինչպես նաև աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

61. Ընկերության անվանմամբ կլոր կնիքը գտնվում է Ընկերության տնօրենի տիրապետման ներքո: Դրա օգտագործման իրավասությունը պատկանում է միայն տնօրենին կամ նրա կողմից լիազորված անձին:

62. Ընկերությունում վերստուգիչ հանձնաժողով չի ձևավորվում:

63. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով, բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, ընկերությունը կարող է ներգրավել աուդիտորի:

IX. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

64. Ընկերության տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, վիճակի, հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական, հարկային և վիճակագրական հաշվետվությունները պետական մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև ընկերության բաժնետերերին, պարտատերերին և զանգվածային լրատվության միջոցներին տրամադրվող տեղեկությունների համար:

65. Ընկերությունը բաժնետերերի պահանջով պարտավոր է նրանց հնարավորություն ընձեռել ծանոթանալու Ընկերությանը վերաբերող փաստաթղթերին և հնգօրյա ժամկետում նրանց տրամադրել փաստաթղթերի պատճենը, բացառությամբ գաղտնի տեղեկությունների և Ընկերության գործադիր մարմնի հրամանների և հրահանգների: Գաղտնի տեղեկությունների ցանկը սահմանում է խորհուրդը՝ տնօրենի ներկայացմամբ:

X. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

66. Ընկերությունը լուծարվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և Օրենքով սահմանված դեպքերում՝ Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով և պահանջներին համապատասխան:

67. Ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը կայացնում է

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ սույն կանոնադրությամբ սահմանված ձայների քանակով:

68. Նախքան լուծարման մասին որոշում ընդունելն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է հաստատի Ընկերության տնօրենի կողմից ներկայացված ամփոփիչ հաշվեկշիռը և Ընկերության լուծարման նախագիծը:

69. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել բացառապես մեկ այլ ներդրումային ընկերությանը միանալու կամ վերակազմավորվելու ձևով՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի և Օրենքի:

XI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

70. Եթե Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի քանակը չի գերազանցում 10-ը, ապա «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62, 63, 64 և 65 հոդվածներով սահմանված նորմերի պահանջները չեն կիրառվում:

71. Սույն կանոնադրությունն այլ (երրորդ) անձանց համար ուժի մեջ է մտնում՝ դրա պետական գրանցման պահից: